

ՏԱՄՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրաբէր գիտնական և ուղղակի
Тифлис. Редакция «Мшак»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիւրով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ՄՇԱԿ

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐԸ

ԱՅՍ 1882 ԹԻՒՆ

(Տ Ա Ս Ն Ե Ւ Մ Ե Կ Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի)

Կը հրատարակվի նոյն գիրքով և նոյն պրոգրամայով:
ՊՐՈԳՐԱՄԱ. I. Տէրութեան կարգ սղորութիւններ, II. Առաջնորդող յօդուածներ, III. Ներ-
քին տեսութիւն, IV. Արտաքին տեսութիւն, V. Խառն լուրեր, VI. Հեռագիրներ, VII. Ֆելետոն
կամ Բանասիրական, VIII. Յայտարարութիւններ:
ԼՐԱԳՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ, 10 ռուբլ է, կես տարվան 6 ռ., իւրաքանչիւր
ամսին 1 ռուբլ: Հատուկ համարները 5 կոպեկ:
Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցեով. Тифлисы, редакция «Мшак».
Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Մի մանկավարժական
խնդիր: Նամակ Մեծ-Պարսկաստանի: Նամակ Յար-
ցինից: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր:—ԱՐ-
ՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ապստամբութիւն սլովակա-
նական երկիրներէ մէջ: Արտաքին լուրեր:—ՀՆՈՒ-
ԳԻՐՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻ-
ՐԱԿԱՆ: Դաւիթ Բէկ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՄԱՆԿԱՎԱՐՃԱԿԱՆ ԽՆԴԻՐ

«Голосъ» լրագրում կարդում ենք: «На-
родная Школа» ամսագրի յունվարի տես-
րակում պ. Միխայիլովին մանրամասնաբար
քննում է մաթ և ֆիզիկայի պատմութիւնը
և ինչպիսիք արտասահմանեան ժողովու-
րդական ուսումնարաններում, առաւելագոյն

Գերմանիայում: Արտասահմանում մինչև հի-
մա էլ մանկավարժների հայեացքը մարմնա-
կան պատմի նշանակութեան վրա, որպէս
կրթողական միջոցի վրա, դեռ ևս վերջնա-
կանապէս չէ որոշվել: Մի քանի պետու-
թիւնների մէջ պատմիները համարվում են
ոչ թէ աննպատակաւարմար, այլ և բոլորովին
ֆլանսակար, միւս պետութիւնների մէջ ու-
սումնարանական բողոքն զոյութիւն ունի,
բայց արդէն խիստ պարսպանդներ էլ է դը-
տել: Այդպիսով, Աստրիայում (1868 թւից)
Բելգիայում, Հոլանդիայում և Ֆրանսիայում
(1834 թւից), Շվեյցարիայի Ֆրանսիական
և գերմանական մի քանի կանտոններում,
նոյնպէս և Հիւսիսամերիկեան Հանրապե-
տութեան մի քանի նահանգներում (Նիւ-
Եօրկում և Նիւ-Ջերսեյում) մարմնական պա-
տիժները բոլորովին վերացված են, այնպէս

որ նրանց գործածող վարժապետը ենթարկ-
վում է դատաստանական հալածանքի: Ան-
գլիայում, Գանիայում, Սպանիայում և Շվե-
ցիայում ծեծք թոյլ է տրվում այն չափով,
բայց որոշված օրէնքով, որ չափով որ հնա-
ւանդ սովորութեամբ եղել է: Իսկ Գերմա-
նիայում մարմնական պատիժները թոյլ են
տրվում օրէնքով և ուսումնարանական պը-
րակիւրից բաց նրանց գործածութիւնը
ուրիշ տեղերից աւելի կանոնաւորված է,
այնպէս որ ապտակից սկսում են և բողոքով
են վերջացնում: Բայց Գերմանիայում էլ
վերջին ժամանակում, այդ բարբարոսութեան
հակառակորդները, պ. Կլեյտի առաջնոր-
դութեամբ, եռանդուն արշաւանք սկսեցին
ծեծի դէմ և յոյս կայ, որ նրանց ապացոյց-
ները, մարմնական պատիժները վերջացնելու
դէմ՝ կը ներդրեն երկրի հասարակական
կարծիքի վրա: Այդ ապացոյցների մէջ ման-
կավարժական կէտից առանձին ուշադրու-
թիւն են դարձնում իրանց վրա հետե-
ւեալները:

«Եթէ ուսումնարանում ծեծի սի-
սեմ գոյութիւն կունենայ, վարժապետը
հազիւ թէ հարկաւոր կը համարի շատ
աշխատել իր մանկավարժական ինքնա-
կրթութեան վրա: Ընտրել մարմնական
պատմի, նա կարող է առանց գլուխ ցաւե-
ցնելու իր դաստաւութեան գործի մէջ յա-
ռաջագիտութիւններին՝ հասնել զոնէ նրա
մօտ դաստան մէջ աշակերտները հանգիստ
կը նստեն, քննութեան ժամանակ աշակերտ-
ների պատասխանները բաւարար կը լինեն,
բայց արդեօք աշակերտները կը դուրս բե-
րեն ուսումնարանից սէր դէպի ուսումն
և ձգտումն դէպի ինքնակրթութիւն, արդեօք
բարոյական կողմից լաւ կրթված կը լինե՞ն

նրանք, այդ թէ քննութեան ժամանակ չի
երևայ, և այլ ճանապարհներով էլ դժուար
կը լինի այդ բանը իմանալ: Ուսուցիչը, այդ-
պիսով կարող է բաւականանալ միայն այն
գիտութիւններով և փորձառութիւններով
կրթութեան մէջ, որոնց նա ձեռք է բերել
սեմնարիայում և յետոյ իր ամբողջ կեան-
քում կը մնայ հնապաշտ:»

ՆԱՄԱԿ ՄԵՏ-ՂԱՐԱՔԻՍԻՑ

Յունվարի 10-ին

Ղարաբլիսի արտիլերիայի պոլիտեխնի մեծ.
Ստուդիցիի բերել տալով Թիֆլիսից ներկայ Օ-
գոստափառ Կայսեր, Ալեքսանդր III-ի փառաւոր
չրջանակով մեծադիր պատկերը, ընծայեց տեղիս
տղայոց դպրոցին: Հղարարութիւնը խորին շը-
նորակալութիւն է անում յիշեալ պարունի այդ-
պիսի թանկագին ընծայի համար:

Օրիորդաց դպրոցի շինութեան հարցը արդէն
զարթել է և ամենատարբ խորհրդածութեան ա-
ռարկայ է դարձած: Եթէ գործող պարտնները այս-
պիսի եռանդով շարունակեն, մինչև սեպտեմբը
Ղարաբլիսի կունենայ մի երկարակնի, սեպտեմ-
բրեան օրիորդաց դպրոց և կազաով վարձով տուն
բանկուց: Եթեթեան պատկերը չիմած պատ-
րաստ են:

Նոյեմբերի 11-ին Ղարաբլիսի ինժ հեռագիր են
խփել, բայց մինչև ցայսօր այդ հեռագիրը ևս դեռ
չիմ ստացել: Այս դեռ ոչինչ—Յունվարի մէկին,
Ղարաբլիսի եղբայրս ինժ հեռագիր է խփում, բայց
ևս այդ հեռագիրը բացարձակ կեղտոտած, ստա-
նում ևս սոյն ամիս 7-ին: Այս էլ ոչինչ: Ալեք-
սանդրապոլից յունվարի 7-ին հեռագրում են ինժ,
պատասխանը վճարած, բայց ևս այս հեռագիրն
էլ դարձեալ բաց արած, կարդացած, ստանում ևս
մի կողմնակի մարդուց երկու օրից յետոյ: Այս-
պիսի խոշոր անկարգութիւնները չը գիտեմ ուրիշ-
ների հետ էլ պատահում են, թէ միայն անբարե-
տիս հետ:—Գնում ևս հաւաքաբանութիւն, հարցնում
ևս, բայց ոչ դ իրան մեղաւոր չէ համարում,

ԴԱՒԻԹ ԲԵԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(1722—1728)

Մթին, արմկալի փողոցով անցաւ նա հրապա-
րակի վրա: Այստեղ մարդիկ նոյնպէս վազվում
էին դէպի դանապան կողմը: Մի քանի փողոցներ
խաչաձև կերպով կարում էին հրապարակը: Խանը
չը դիտէր նրանցից որք ընտրել:

—Յետ նայեցէք, խան, ասաց նրա թիկնապա-
նիցի մէկը.—ամբողջ «Փոս-թաղը» այրվում է:
Խանը նայեց և ոչինչ չը պատասխանեց:

—Այդ մարդիկը այնտեղից են փախչում, աւե-
լացրեց թիկնապանը:—Տեսնում էք, նրանցից չա-
տորը չալակած ունեն իրանց տնային կարասի-
ները:

—Ո՛ր են գնում, հարցրեց խանը:
—Երեկ, իրանք էլ չը գիտեն...

Խանը ընտրեց խաչաձև փողոցներից մէկը և
անցաւ: Այդ միջոցին յայտնվեցաւ թշնամիների
մի խումբ, որ մի և նոյն փողոցով գալիս էր
ցանկաւորվող նրա հանդէպ: Նրանք անգամ մօտ էին,
որ խանը մինչև անգամ լսում էր նրանց ձայ-
ները:

Խանը յետ դարձաւ: Բայց մի քանի քայլ հեռա-
նալուց յետոյ նկատեց, որ ինքը մնալի է: Նրա
թիկնապանները կամ թողնեցին նրան և փախան,
կամ, թշնամուն մօտից տեսնելով, չիտթվեցան և

աչքից կորցրին իրանց տիրոջը: Վերջինը աւելի
հաւանական էր: Նա մնաց միմալ: Իր բերդի, իր
ժողովրդի մէջ մնալի մնաց նա: Այլ ևս ոչ ոք
չէր նայում նրա վրա: Այժմ միայն տիրեց նրան
սպառնալի դարձուածը: Բայց նա այնքան սրտի
և կամքի ամրութիւն ունէր, որ բոլորովին չը
շուարկեցաւ, չը յուսահատվեցաւ:

Նա մտաւ մի նեղ ճուղի: Այնտեղ էր կրկին
չը հանդիպել թշնամուն: Ամէն անից, որ անց-
նում էր նա, լսում էր ցաւալի ձայներ, յուսահա-
տական աղաղակներ, լաց, արտասուք: Մարդիկ,
սպառնալի ճգնաժամի մէջ, չը գիտէին որտեղ
թաղանթ իրանց դուրսը: Նա լսում էր ժողովրդի
սուգն ու ողբը և անց էր կենում:

Անցողաբար նեղ ճուղի մէջ չափազանց
դժուարին էր: Երբեմն ետեւից, երբեմն առջեւից
զարկվում էին նրան փախտական մարդիկ, և
հայհոյանում անց էին կենում: Մէկը գլուխը
սատակի խփելով նրա ձակատին, ասաց.

—Այ՛ր, ես, չես տեսնում. ճանապարհովդ ուղիղ
գնա:

Երկրի իշխանը լուս կացաւ:
Գրանք այն արտաբերեցին, որ նրա շուաքն
անգամ տեսնելիս, մինչև գետին կը թեքվէին և
հարկը անգամ գլուխ կը տալին: Այժմ իրանց
գլուխները զարկում էին նրա գլխին... Ճակատա-
գիրը ահա այնպիսի խաղեր ունի...

Նեղ ճուղան դուրս հանեց նրան մի բաւական
ընդարձակ փողոց: Այստեղ մարդիկ աւելի խոշոր
խումբերով էին վազվում: Այդ մարդիկը զինված
էին:

—Մերոնք կոտորվեցան... մերոնք կոտորվեցան...
աղաղակում էին նրանք:

—Ի՞նչպէս կոտորվեցան, հարցրեց խանը, նրան-
ցից մէկին կանգնացնելով:

—Կոտորվեցան էլի, պատասխանեց նա, արագ
վազելուց դժուարութեամբ շուռն քաշելով:—Թըշ-
նամին դրոյց խորտակում էր բերդի երկաթե
դռները. մերոնք աշխատում էին արգելել. Նրանք
յաղթեցին, խորտակեցին դռները և ներս մտան:

—Ո՛ր դռները:

—Երկաթե դռները:

Բերդի բոլոր դռները երկաթե էին շինված:
Բայց փախտականի պատմութիւնը այն դռների
մասին էր, որ ուղիղ բացվում էին դէպի Միխայիլ
սպարապետի բանակի կողմը: Ուրեմն բերդի մէջ
մուտք գործողը նա պիտի լինէր:

—Յետոյ ի՞նչ եղաւ, հարցրեց խանը:

—Յետոյ չեմ իմանում ի՞նչ եղաւ, պատասխա-
նեց նա.—ես փախայ:

—Դու գլխուքը ես:

—Ապա ի՞նչ եմ:

Խանը նկատեց, որ այդ բոլոր փախտական-
ները իր զինուորներն էին: Նա մտածեց կանգնեց
նեղ նրանց: Նա կամեցաւ յայտնել իր ու լինելը
և իր իշխանական բարձր հրամանով ստիպել
նրանց յետ դառնալ, կռւել, մինչև արեան վերջին
կաթիլը կռւել:

Մինչ այդ մտածութեան մէջ էր նա, տեսաւ,
իրաւ որ, թշնամու զօրքը բերդի «Մեղրու դուռ»
կռված մուտքից ներս մտնելով, առաջ էր գալիս:
Նրանցից ոմանք բռնած ունէին վառած ջահեր,
և փողոցը, որտեղից անցնում էին, այդ ջահերով
լուսաւորված էր: Մի տան լուսաւորութիւնը արձակե-
ցին նրանց վրա ատրճանակ: Գունդը կանգնեց և
մի քանի բողբոյ մէջ տունը հիմնադրեցաւ դարձաւ:

Բնակիչները դիակները խառնվեցան ընակարանի
փլատակների հետ:

Գունդը մօտենում էր: Ջահերը լոյսը ճառա-
զայթում էր խանի սպանված, գունաթափ դէմքի
վրա: Նա մի կողմ քաշվեցաւ, որ չը ճանաչվի:
Թաղանթեցաւ մի միջին անկիւնում: Գունդը անցաւ:
Այժմ նա ևս կամենում էր դուրս գալ իր թա-
գստի տեղից: Բայց դէպի քր կողմը գնաց: Նա
իր բերդի բոլոր փողոցների հետ ծանօթ էր. նա
ծանօթ էր մի քանի ուղիղ փողոցների, որոնց
միջով ճանդիւսաւոր կերպով անցնում էր, երբ իր
ամբողջ զօրս գալով, գնում էր որսորդութեան:
Մի քանի բողբոյ անշարժ մնաց իր թագստի տե-
ղում. դուրս չեկաւ, վախենում էր թշնամու խում-
բերի հանդիպել:

Նրա մօտից, խաւարի մէջ խարխալելով, անց-
նում էին մի քանի հոգի: Նա մտածեց, թէ իրան
են որոնում և աւելի պինդ կերպով սեղմվեցաւ իր
թագստի մէջ:

—Ապալը, կամաց գնա, որ ես համենմ, կան-
չում էր մէկը նրա ետեւից:

—Վաղիր, ես կանգնեմ չեմ կարող, ասում էր
Աքալը հեռուից:

—Ես վերաւորված եմ, օգնիր ինձ, չարժիկ
չեմ կարողանում, աղաչում էր առաջին ձայնը:

Աքալը ոչինչ չը պատասխանեց և անցաւ:
Խանը ճանաչեց իր նոր մեղրիկին և իր զօրքերի
զլխաւոր հրամանատարին:

—Ի՞նչու է փախչում նա, հարցրեց խանը մէ-
կից, որ ուրուականի նման, խաւարի միջով, մօ-
տեցաւ իրան:

—Երեկ «ճանձերը» շատ են նեղացնում... պա-
տասխանեց նա ծիծաղելով:

գարձեալ ինձ են մեղադրում որ անընդունակ եմ մարդարեւնաւու ինձ ուղղելիք հեռագիրներ ձեռնարկելու:

Ղարաբլիկի ուսուցիչները մի քանի երիտասարդներին օգնութեամբ շուտով ներկայացնելու են «Ներք հարկերդոյն» բոլորովին նոր և ձեռագիր պիեսան յօդուտ տեղական հայ դրամարանի:

Ներք տարի է ամեն տեսակ հրաւերներով խօսելով, խնդրելով, աղաչելով բեզարեցի և իմ բոլոր աղաչանքս մնաց «ձայն բարբառայ յառապատի»: Եւ չարաչարով եմ բոլորովին առանց որ և ինչ ակնկալութեան Ղարաբլիկում բաց անել մի հասակաւորաց դպրոց, որտեղ պիտի սովորէին հայերէն գրել կարգաւ և թարգմանութիւն: Բայց տարաբարեւորաբար չը կարողացայ այդ անդրադառնալ երիտասարդներէն հեռացնել ձայն յիմար նախապաշարմունքը թէ «մեծ աղէն դաւամ չի սարկի մեծ մարդը կարալ չի կարգայ և մենք ամօթ է այդպիսիներէ համար «չիօլ» մտնիլ»: Ձեր մեղքը, ձեր շէնքը:

Արդիւր ընկերացիներէն յայտնի պիտի լինի որ Ղարաբլիկի մի քանի կանայք ամսական 20 կօպէկ նուիրելով օգնում են տեղական որդի չքաւոր օրիւններէն ուսման գործում: Ներքեանց, Ղարաբլիկ և Ալեքսանդրապոլից մի քանի բարեակրտ կանայք իրանց նուէրներով օգնում են մեր ընկերութեան: Յոյս ունեմ, որ Ղարաբլիկի կանայք այս տարի աւելի ջիւղմունքներով կանայք կը շարունակեն իրանց գործը և կը միմիկարեն աղքատ և որդ օրիւններէն: Օրիւնդաց դպրոցի ձեռագործութեան վիճակարկութեան համար անցեալ թէի օգոստոսին զինեմ են իշխանութեան, բայց մինչև այսօր ոչ հրաման կայ և ոչ տեղեկութիւն: Աղքատ դպրոցի ձեռագործները առանց ծախելու մնում են սընդուկում:

Ջալալ-Օղլու դպրոցներին վերաբերութեամբ շատ անախարհ և անմիտ լուրեր են լսում: Շատ ցատկ է, եթէ լուրերը ստույգ լինեն: Այդ դպրոցներին դարձուրում ընդհանուր ցաւ կը պատճառէ ամբողջ Լուսն դաւաճում: Բոլոր գիւղի դպրոցն էլ այս տարի դեռ ոչ բացվել է և ոչ վարձապետ ունի: Մի քանի շարահոյի մարդիկ դպրոցը խախտեցին և հասան իրանց դիւական բաղձանքին: Ամօթ և նախադրեալ այդպիսի շարահոյաց մարդկանց:

Ներք ամիս առաջ մեր դպրոցադատան չիւնութեան վերաբեր գերաններ և պատիւ քարեր դրոցացի պարոնները դեռ մինչև ցայսօր անպատիժ իրանց քէֆին դրօնում են: Մէկ ուրիշ լուր էլ տղայաց դարբանի կ'ըղպէր երկու գիշեր իրար վրա կտորեց և իր գիշերային ճանապարհը կարճացրեց: Այդ կողմէ կտորողը հետեւալ գիշերը մէկ հաւանոցից 12 հաւ դողացաւ և 12-ին էլ թիկ հանեց: Բոլոր ըստրեկիւնցիք դարձանք էին թէ շատ ու քիչ բարստ տեսել էինք, բայց հաւ տիկ հանել չէինք տեսել:—Գլորացի արտաբերողները

Խանը ճանաչեց իր հին վեղիւրի ձայնը: Բայց միթէ նա բանտարկված չէր, ո՞վ բաց թողեց նրան, հիմա ո՞ր է գնում,—այդ հարցերը չիմտեցին խանին: Վեղիւրը թողեց խանին և դիմեց դեպի վերաւորեալը, որին չը կամեցաւ օգնել Աբգարը:

Խանը մնաց մտաւտանջութեան մէջ: «Ինձ ճանաչեց, մտածում էր նա,—երեւի, ինձ որոնում էր և դուռն: Հիմա կաշխատէ ինձ մտանել, անպատճառ մասնել թշնամու ձեռքը... Այն, որքան դուռն կերպով ծիծաղեց նա իմ դիւրահաւանութեան վրա. ինձ յիշեցրեց իմ յիմարութիւնը, որ ես Աբգարի խօսքերը հաւած խղի տեղ ընդունեցի, երբ նա թշնամու ճանձերի հետ էր համեմատում... Փախելու... բայց ո՞ր փախելու...: Գոնէ գտնվել մի մարդ, որին եմ յայտնել իմ ուղ լինելը, և նա կառաջողութիւն ինձ»...

Վեղիւրը կրկին վերադարձաւ դեպի խանը: Այն վերադարձը, որի մօտ գնաց նա օգնելու, արդէն մեռած էր: Դա խանի քաջ և նշանաւոր զօրապետներից մէկն էր:

—Հիմա համոզվեցա՞ր, խան, որ մեր թշնամիները ճանձեր չեն եղել... հարցրեց պաշտօնից դրված վեղիւրը, կանգնելով նրա առջև:

Խանը ոչինչ չը պատասխանեց, միայն վրդովմեցաւ ծերունու յանդիմանութեան պատճառով:

Ծերունին հասցրեց երկրորդ հարուածը:

—Տեսա՞ր, խան, ինչպէս էր փախչում ձեր նոր վեղիւրը և զօրքերի պաշտօնախօս հրամանատարը «ճանձերի» առջևից...

—Տեսայ, պատասխանեց խանը դառնութեամբ:

—Բայց ես հրամայեցի, որ ձեզ բանտարկեն, այդ ինչպէս եղաւ, որ փախաք բանտից:

դեռ... Հա, մեղայ Աստուծոյ, ես խոտտացել էի այս մասին չը խօսել. մտապիտ խոտտումս, ներողութիւն:

Փոստային կայարանը, որ մինչև ցայսօր դռնափակ էր գիւղի ուղի կենտրոնում, ժողովրդի խիտ տեղում, մեծ փողոցի վրա, որից գիշեր ցերեկ բուրում էր անտանելի դարձահոտութիւն, և որը կատարեալ ժանտախտի և խօրեայի աղբիւր էր, այժմ Աւետիս Միրզայեանցի շնորհիւ փոխվեցաւ գիւղից բոլորովին դուրս և ազատվեցան հազարաւոր դրօնները այդ գոմի դարձահոտութիւնից:

Այս տարի Ղարաբլիկում ստացվում է մօտաւորապէս մինչև 30 օրինակ հայ լրագիրներից: Թող ամաչեն գաւառական քաղաքները 250 տանից բաղկացած Ղարաբլիկից:

Ղարաբլիկում վաղուց կազմված կայ մի «Արհեստագործ» ընկերութիւն, որը կամայ կամայ մօտենում է իր դերեգմանի: Կարծեմ պատանը և դազողը պատրաստ է: Ես խանարհարաբ կը խնդրէ այդ ընկերութեան ուստարաչուց, որ մնացած փողերը աղքատներին տար և նուիրել տեղական դպրոցին, որով իր կենդանութեան ժամանակ մի շատ բարի գործ կատարած կը լինէր:

Սարգիս Գէր-Մեքիսեան

ՆԱՄԱԿ ՅԱՐԻՑԻՆԻՑ

Յունվարի 10-ին 1882 թիւ

Այսօր «Մշակի»-ի կայացողներին հաղորդում եմ, թէ մենք Յարիցին մէջ ջրօրհնաց ածող որպէս անցուցինք: Յարիցին մէջ առհասարակ ամեն օր ժողովում ենք երեւթուող կայարանը, որտեղ կատարվում են առևտրական գործեր, մի խօսքով այդ վօքսալը փոխարինում է բօրայի և այգիստութեամբ տալիս է միւս ամենայնաբար միջոց միմիկարեն հետ տեսակցելու: Այդպէս ժողովված օրերից մինի մէջ պ. Նուրէր Բուզադեանց առաջարկեց մէկ միտք. տօն, այն է գիշերը—որպէս առհասարակ հայոց մէջ ընդունված է—տօնից տօն առախալ չըլնէր և ժողովներ բարեգործական նպատակի համար փող. ի հարկէ, անկասկած ամեն հեքանքը ընդունեցինք: Եւ այդպէս պ. պ. Բուզադեանց, Պապայեանց, Տէր-Միքայէլեանց և ես չըլնեցինք տներ, որտեղ մեզ ընդունեցին մեծ համակրանքով, ոմանք մանուկներից իրանց անկողիններին չապկենքով դարձանք մի լուսն էին երգեցողութիւնը: Այդպէս չըլնելով, առանց բացառութեան, ամեն անգամ, ժողովեցինք նրանց բարեգործութեամբ 373 բուրլ: Այս գումարից հատուցվեց 20 բուրլի մէկ աղքատ ուսուցչին ընտանեաց, իսկ մնացեալ 353 բուրլուց 3 բուրլին դուրս եկալ ծախքի համար, մնացեալ միւս 350 բուրլին փոխադրեցի «Մշակի»-ի խմբագրատան անուամբ: Խնդրում ենք ձեզ, պ. խմբագիր, այդ

—Ես չը փախայ, ես փախչելու սովորութիւն չունեմ: Իրաւ է, դուք հրամայեցիք ինձ բանտարկել, բայց չը մտածեցիք, որ դուք այլ ես բանտ չունէիք:

—Ինչպէս չունէիք:

—Ձեր բանտը, մինչև ինձ այնտեղ հասցնելը, արդէն քանդված էր: Ձեր աւելի քան մի քանի հարկեր բանտարկեալները, որոնք ըստ մեծի մասին հայեր էին, օգուտ քաղելով լեղրի մէջ պատահած խռովութիւններից, փչել էին իրանց չըլնեցինք և իրանց ձեռքով քանդել էին բանտը: Այս պատճառով ձեր հրամանը անկատար մնաց, որովհետեւ տեղ չը գտան ինձ բանտարկելու:

—Իսկ իմ բանտապետները, պահապանները ինչպէս չը զսպեցին անդամներին:

—Բանտարկեալները կոտորեցին նրանց:

Այն բոլոր թշնամութիւններից յետոյ, որոնց ակնատեսն էր եղած այն գիշեր բերդի դժբախտ իշխանը, այդ լուրը աւելի խոր խոցեց նրա սիրտը:

—Եւ դուք, աղաւթիւով բանտից, երեւի, մի առիթ էիք որոնում վրէժխնդր լինելու ձեզ բանտարկողից, հարցրեց նա:

—Ոչ, ես վրէժխնդր չեմ լինում այն անձից, որ արդէն դժբախտութեան մէջ է գտնվում, պատասխանեց ծերունի վեղիւրը կարեկցական եղանակով:—Ինչո՞հասկառախ, ես չտեսեցի ձեզ օգնելու: Նրկար որոնում էի ձեզ: Նրկ թշնամու գունդը անցաւ, ջանքի լուսաւորութեան առջև ճանաչեցի ձեզ և մօտեցայ:

Վեղիւրի ցաւակցական պատասխանը աւելի վերաբերեց խանին. նա իր սովորական հպարտութեանը ասաց.

գումարից 150 բուրլին գործ դնել բարեգործական ինչ նպատակի որ դուք կամեաք, 100 բուրլին ուղարկել Կ. Պօլիս Գալֆայեան որոնողին և 100 բուրլին Միացեալ ընկերութեանը: Մեր այս գործին համակրելով, մի քանի այլազգի պարոններ չը խնայեցին իրանց լուսն, որոնց յայտնում ենք մեր յարգանքը: Այս նուիրողների ցուցակը: Եղարթ Բուզադեանց 50 բ., Եղարթ Պապայեանց 25 բ., Եղարթ Աղամանց 25 բ., Սերգէյ Տէր-Միքայէլեանց 20 բ., Չախմաստեանց 20 բ., Կարապետեանց Գրիգոր 18 բ., Նկատրինա Կարապետեան 5 բ., Գարապետ Բէկլարեանց 20 բ., Սիմօն Առաքելեանց 20 բ., Ալեք. Բաւար խաչիկեանց 15 բ., Անտօն Մարչենկօ 25 բ., Նիկօլայ Մենձլեւեւ 15 բ., Վասիլի Րեւելեւ 1 բ., Յիշենբերց 1 բ., Երեմիա Լազարով 10 բ., Սիմօն Բալեանց 15 բ., Աղաբայ Խոճեանց 10 բ., Վարդիւս Խաղիկեանց 15 բ., Ընկեր Բուշիկեանց 10 բ., և Հախումեանց 10 բ., Յակօբ Բուշիկեանց 10 բ., Գարանիկեանց 15 բ., Մնացական Միսկարեանց 10 բ., Յարութիւն Տէր-Միքայէլեանց 5 բ., Կարապետ Մէլիքեանց 5 բ., Վարդան Սիւնիկով 3 բ., Նիկիտա Մախարով 5 բ.: Գումարն է 373 բ.: Ի վերջոյ պարզ եմ համարում մեր խորին յարգանաց շնորհակալութիւնը յայտնելու Յարիցին մարդասէր հայ բնակիչներին:

Մենք Յարիցին դաղթականներս միախումբ շնորհաւորում ենք համակրելի «Մշակի» նոր տարին և տաանիներորդ տարեդարձը, մաղթելով բազմաթիւ տարիների աջողակ շրջաններ:

Ա. Գ.

ՆԱՄԱԿ ԽՄԱՍԳՐԻՆ

Թիֆլիս, 20 յունվարի

Ի պատասխանի ծանուցման պարոն Մադաքեանի Բօստօլից, պատիւ ունիմ յայտնելու որ պարոն Սիմօն Սախարեանցը «Էս էլ իմ սաղի» տպագրութեան վերահսկողութիւնը յանձնած է ինձ, իսկ ձեռագիրն արդէն ուղարկված է պարոն Մախարիսեանցին գրաքննիչին ներկայացնելու, որ և անշուշտ մօտապայում կը մտնի մամուլի տակ: Խնդրեմ երկուդոս տպագրել ի միամտութիւն բաժանորդագրողաց:

Յովհաննէս Ս. Սախարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՅԱՐԻՑԻՆԻ հայերից ստացանք 350 բուրլ գումարից 150 բուրլ, որ նուիրողները մեզ խնդրում են գործ դնել մի որ և է աղօթուտ գործին, մենք գործ կը դնենք այս կամ այն ձևով Թիֆլիսի

—Նորահալ եմ, ախիս, որ ձեր օգնութեանը այլ ես կարատարութիւն չունեմ: Գուք միայն ինձ այն ասեցէ՛ր, կոխնիւրից ինչ տեղեկութիւն ունիք:

—Ես անցայ համարեա բոլոր կէտերի վրա, ուր որ կուտ էին մեր զօրքերը: Զօրքերը, պէտք է խոտտվանամ, քաջութեամբ էին պաշտպանում: Եթէ նրանց առաջնորդները այնպիսի վատ, երկչու և տգէտ մարդիկ չը լինէին,—եթէ նրանք չը թողնէին իրանց գունդերը և չը փախչէին, գոյցէ ձեզ զինուորները թող չէին տայ, որ թշնամին առանց կողմից մտնէր բերդը:

—Լաւ, բոլորը հասկացայ... ասաց խանը զայլ բացած ձայնով:—Խնդրում եմ, որ հիմա ինձ մեռնակ թողնէք:

—Ես ձեզ երկար չեմ ձանձրացնի, որովհետեւ ինքս էլ չապում եմ...

—Ո՞ր պիտի գնաք:

—Բէկի մօտը:

—Բէկի մօտ, հարցրեց խանը կատկածանքով:

—Ինչ գործ ունիք այն աւազակի հետ:

—Գնում եմ, որ ընկնեմ նրա ոտքերի առջև, համբուրեմ, աղաչեմ, պաղատեմ, որ խնայէ մնացածներին և կոտորել չը տայ:

Գուռը իշխանը, որ իրան երեք թոյլ չէր տայ, որ և ինչ խնդրեով դիմել երկրի թագաւորներին անգամ, բունց պաշտօնադուրկ վեղիւրի ձեռքից, և աղաչելով ասաց.

—Լսեցէ՛ր, վեղիւր, ես ձեզ կոչում եմ ձեր առաջվայ պաշտօնի անտնով,—եթէ մնացել է ձեր մէջ յարգանքի որ և ինչ նշոյլ դէպի ձեր նախկին տերը, լսեցէ՛ր նրա առաջ խորհուրդը, և մի զընացէ՛ր այն աւազակի մօտ:

—Եւ հիմա էլ յայտնում եմ ձեզ, ինչպէս միշտ,

հայոց դատը Եւրօպայում պաշտպանելու գործի վրա:

«Մշակի» հրատարակութեան առաջին տարին մենք ոչ մի բաժանորդ չունէինք: ԱՍՏՐԱՍՆԻՑ Այդ քաղաքի հայերը այն ժամանակ նամակներով մեզ յայտնեցին որ պէտք չունենք հայոց լրագրի քանի որ ուսուցչն են կարդում: Մի և նոյն տարվայ վերջը յայտնվեցաւ մի բաժանորդ Աստրախանում: Այնուհետև խրաբանչիւր տարի «Մշակի» բաժանորդները աւելանում էին Աստրախանում, մենք ունեցանք հետզհետէ տասն և հինգ, տասն և ութ, քսան բաժանորդ: Իսկ ներկայ 1882 թիւին «Մշակը» ունի Աստրախանում 35 բաժանորդ որոնք բոլորն էլ կամաւոր կերպով են գրվել:

Թիֆլիսի կաթիլական առաջին Գիմնազիայի ուսուցիչ պ. Գօրիսով իրան թոյլ է տալիս վեցերորդ դաստան հայ աշակերտներին հրապարակապէս «արմատիկ սօլնից» անուանել: Կարծում եմ որ այդ տեսակ անսովորները շատ մանկաւարժական չեն կարող անուանվել, և պատիւ չեն բերում մի մանկավարժի:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ ԱՆՎԻՍԱՆԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐԻ ՄԵՋ

Այժմ այլ ևս ոչ ոք չէ կասկածում, որ Աւստրիայի հարաւում՝ Գալիցիայում և Հերցեգովինայում ապստամբութիւն է ըսկալվել գրում է «Полоса»: Այժմ այլ ևս անկարելի է հերքել ապստամբութիւնը, քանի որ շտապով զօրքեր են ուղարկվում ապստամբված նահանգները, այդ նահանգները չըթախանեալ եղած զօրքերը հաւաքում են, գումարվում է աւստրիական պատգամաւորներ ժողովը արտաքց կարգի կրեդիտ հաստատելու համար: Այժմ ընդհակառակ է թէ Վիենայի, թէ Պրագայի, թէ Պեշտի և թէ Զագրեբի մէջ միաձայն ասում են, որ ապստամբութիւնը մեծ չափեր է ստանում, որ նրա բեմը ընդարձակվում է և որ վերտանգը հետցհետէ մեծանում է: Գործեր իսկական գրութեան գաղտնի պահելը լա հեռանքների չունեցաւ: Մյուս գրութիւնը աւելի էլ անհանգստացնող հանդիսացաւ երբ անպատրաստ հասարակութիւնը նկատեց ընդարձակված ապստամբութիւն այն

պատասխանեց վեղիւր սառն կերպով:—Բայց ընդառնալ մոտուրմաների կեանքը աւելի մեծ նշանակութիւն ունի ինձ համար, քան թէ ձեր առաջ խորհուրդը:

—Բէկը այն դազաններից չէ, որ ընդունէ ձեզ խնդրեք, դուք ի դուր ձեզ կը ստորագնէք միայն:

—Ես յանձն եմ առնում այդ ստորութիւնը բայց մի և նոյն ժամանակ դիտեմ, որքան անդուր է բէկը, այնքան էլ մեծահոգի է:

—Բայց այդ ստորութիւնը վերաբերում է ամբողջ մոտուրմաններին,—մի գաւառից դիմութիւն խնդրեք:

—Մոտուրմաններին կրօնքով թոյլ է տուաւ հարկը պահանջած դէպքերում թաղիաց անել *):

Խանը, նկատելով որ ոչինչ կերպով չէ կարող համոզել յանաւ ծերունուն, ասաց.

—Գնացէ՛ր, այդ ձեր կամքն է, միայն խօսք տուցէ՛ր ինձ, որ դուք չէք ներկայանայ այն աւազակի մօտ իբրեւ իմ վեղիւր, և իմ կողմից ոչինչ չէք խօսի:

—Ես հաստատ խօսք եմ տալիս ձեզ, որ կը ներկայանամ իբրեւ հասարակ մարդ:

Վեղիւրը հեռացաւ:

Խանը մնաց միմիկար: Ձը դիտէր ինչ անել, ուր դնալ: Նրան տիրեց սարսափելի վախճանութիւն:

«Ամեն բան կորաւ, ամեն ինչ օչնացաւ, այլ ես ոչինչ լիւս յոյս դնելու տեղ չէ մնացել... մտածում էր նա»:

Նա մտաւրեց իր ամրոցը, իր կնիքները, ի ներքին անկը նշ. ստիպողական պահանջներ և հանգամանքների հետ յարաբարել, թէ նրանք հակառակ լինէին մահմեդական օրէնքներին:

*) Թաղիաց անել նշ. ստիպողական պահանջներ և հանգամանքների հետ յարաբարել, թէ նրանք հակառակ լինէին մահմեդական օրէնքներին:

տեղ ուր պաշտօնական լրագրիները հաղորդած տեղեկութիւնները համեմատ թափառում էին աւագանիների անշնան խումբերը։ Բոլորից մէջ սկսւած և պատեղից չէր քննարկուող անցած ապստամբութիւնը աւստրիական տիրապետութեան դէմ, այժմ յայտնվեցաւ ոչ թէ միայն չեղեցիկութեամբ հիւսիսում և արևելքում, այլ և սկսեց տարածվել հարավային Բալկանյի մէջ։ Եթէ հաւատարմորէն հեռագրական լուրերին, երկուց կայ, որ շուտով ապստամբները կը յայտնվեն նոյնպէս և Բալկանյի մայրաքաղաքի, Սերայի մէջ։

Իսկապէս պատահեցաւ այն, ինչ որ պէտք էր սպասել, ծանօթ լինելով աւստրիական կառավարութեան հետ Բալկանեան թերակղզու վրա։ Ձիւղորդական պոլիցիական վարչութեան կողմէն կամայականութեամբ վերադարձ, ծանր և անիրաւացի տուրքերով ճնշւած, բանտերի մէջ անդադար կայանաւորող ազգաբնակիչները Բալկանյի մէջ ի գործ դնալով միջոցները և անտանելի դժուրութիւնները աւստրիական կենտրոնական իշխանութեանը, ի զուր բողոքում էր Եւրոպային, զիմեղով ուղղուածով Անգլիայի և միւս պետութիւններին կառավարութիւններին։ Այս վիճակները այդ զանգարաններն աւստրիական կառավարութիւնը պատասխանում էր նոր բռնութիւններով, որոնց չափը անցաւ, երբ այդ նահանգների մէջ կամեցան մոյցնել պարտադիր զինուորագրութիւն, որ ազգաբնակիչները անկայտ էր մինչև անգամ թիւրքաց տիրապետութեան ժամանակ։

Ծանօթ և փորձած չարքեր աւելի հեշտութեամբ է տանվում, քան թէ մի չարք, որ անտուր է և այդ պատճառով աւելի զարհուրելի, աւելի անտանելի։ Ինչ որ չը կարողացան անել պոլիցիական վարչութեան կամայականութիւնը և անիրաւութիւնը, ծանր հարկերը, այդ գործը կատարեց անցեալ տարին հրատարակված օրենքը ընդհանուր զինուորագրութեան մասին աւստրիացիներից գրաւված թիւրքաց նահանգների մէջ։ Այդ նահանգների ազգաբնակիչները, որ ծանօթ չէր այդ պարտականութեան հետ, Աւստրիային, Թիւրքիային և վերջապէս Եւրոպային մի քանի անգամ բողոքելով, յետոյ

զաւակնեցին։ «Չէ, մտածեց, նա, ես պիտի չտապեմ դէպի իմ տունը, քանի որ թշնամին չէ գրաւել նրան»։...

Նա դուրս եկաւ իր թաղաքի տեղից։ Բայց վախնում էր, որ ճանաչվի, վախնում էր թշնամու ձեռքը ընկնելու։ Գիշերը անցել էր արդէն, օրը լուսանալու մօտ էր, երկինքը սկսել էր պարզվել։ «Իմ հագուստը կարող է մասնակի լինել, պէտք է փոխել», մտածեց նա։

Այդ պէտքը լրացնելու համար մեծ գոգարութիւն չը կար, փողոցները ծածկված էին դիակներով, նա մօտեցաւ մէկին և սկսեց մերկացնել։ Կաշապ հոտից քաղ ընկած չլիքայնաձև մորալից նկատեց նա, որ դա մի ջրեպանի դիակ էր, գոց էր ջրեպաններից մէկի դիակը։ Բայց հագուստները մէջ ընտրութիւն անելու ժամանակ չուներ նա, այդ աւելի լաւ էր, աւելի անճանաչելի կարող էր դարձնել նրան։ Նա հանեց իր իշխանական զգեստը և մի կողմ ձգեց։ Նրա հետ, կարծես, մերկացաւ իր բոլոր փառքը...

Հագուստը փոխելուց յետոյ նա լուսնից առաջին հանդիպած փողոցը և սկսեց առաջ դնալ։ Անցողաբար սարսափելի էր։ Նոյն փողոցի անձնութեան մէջ կենդանի մարդկանց մարմինները խառնվում էին ընկած դիակների հետ։ Կանաչ, երկնաւուն, անգործ ծերունիք, չը կարողանալով դուրս պրծնել մարդկանց սոսկալի հոսանքի միջով, ցած էին զրոյրում, և հաղորաւոր ոտքերի տակ տրոլում էին, ճիւղում էին։ Սրից ազատվածը զոհ էր դնում ամբողջ կատաղի անգիտութեանը։

Բայց ուր էր դիմում այդ փոթորկային, խելագորոյս բազմութիւնը։ Նա փախչում էր։ Նա ա-

կորցրեց համբերութիւնը և ստիպեցաւ ապստամբվել։ Այդ ապստամբութիւնը պէտք է զարնանը սկսվեր, բայց նա աւելի շուտ պատահեցաւ, երբ ոտքի կանգնեց հարաւային Գալաթիայի ազգաբնակիչները, որոնք նոյնպէս մայրաքաղաք էր ընդհանուր զինուորագրութիւնը։

Այժմ աւստրիացիները ստիպված են նորից նուաճել այն նահանգները, որոնց վրա նրանք 1878 թվին այնպիսի մեծ դժուարութեամբ և արեւհեղութեան դեմ իշխանութիւն ձեռք բերին։ Այս անգամ ապստամբութիւնը աւելի հեշտ է ճնշել, որովհետեւ երկրի ստրատեգիական նշանաւոր կետերը աւստրիական զօրքերի ձեռքին են, որովհետեւ ճանապարհները աւելի լաւ են, քան թէ առաջ, երբ աւստրիացիները բերլինի կոնգրեսի վճիռը իրագործելու համար գրաւեցին այդ նահանգները։ Աւստրիական կառավարութեան գործադրած նշանաւոր միջոցները ապացուցանում են, որ նա հասկանում է վտանգի մեծութիւնը և իր իշխանութիւնը երկրի մէջ հաստատելու համար հարկաւոր է համարում ամենալճուղական միջոցները դիմել։

Մինչև անգամ հաւատարմով, որ ապստամբութիւնը շուտով կը ճնշվի, թէպէտ մինչև գարունը այդ մասին մտածել էլ չէ կարելի, մենք ակամայ հարց ենք առաջարկում։ Նոյն միջոցներով աւստրիական կառավարութիւնը մտադիր է իսկապէս խաղաղացնել իր գործերով գրաւված թիւրքաց նահանգները։ Այդ հարցը առաջարկում են նոյնպէս և Աւստրիայի մէջ, հասկանալով, թէ որքան թանկ է նստում պետութեանը անդադար գործ ունենալ ապստամբութեան հետ պետական երկրի մէջ, որ ենթարկվել է Աւստրիայի իշխանութեանը քաղաքացիների վճռով, ազգաբնակիչների կամքի հակառակ։

Աւստրիական պետութեան պղծման հպտակների լրագրիները այդ նահանգները Աւստրիայի հետ կապելու համար միակ միջոց են համարում՝ նրանց որքան կարելի է ընդարձակ ինքնավարութիւն շնորհել։ Գերմանացի կենտրոնականները հակառակ են կարծում։ Նրանք պնդում են, որ աւստրիական քաղաքականութիւնը հարաւային պետականների վերաբերութեամբ չափազանց

մեծ ինչ մտացած, տուն, ընտանիք, դասերին, իր ազատութիւնը աշխատում էր դանդաղ փախուստի մէջ, ամենին չը մտածելով, արդեօք նա ունի փախչելու։

Մարդկային բարբարոսութիւնը, անգիտութիւնը կատարում էր մի հակադաս խաղ, որի նման յորինում են փողբիլ մասնակիները, միայն փողբիլ ձևով։ Ո՛վ չէ տեսել այն խաղը, թէ ինչպէս են պատժում կործանելին։ Երկացած անգիտներով կազմում են մի հաւատարմ բոլորակ, թունաւոր միջատներին ձգում են այդ հրեղին բոլորակի մէջ։ Նրանք սկսում են այս կողմ և այն կողմ վազվել, որ մի կէք գտնեն փախչելու, աղաւթվելու։ Բայց ամեն կողմից կրակի հանդիպելով, յետ ևս դառնում։ Հազար անգամ կատարում են նրանք մի և նոյն շրջանը, մի և նոյն փորձը, բայց կենսաբան պաշտպանութեան տալիս միջոց միշտ մոռանում են կրակը, մինչև կրկին անգամ չեն հանդիպում նրան։ Վերջը յուսահատութիւնից, անճարութիւնից, իրանց խաղից ցրվում են իրանց մարմին մէջ և անճանաչանութիւն են դրոճում։

Մի և նոյն դրութեան մէջ էր բերդապարտը։ Ամեն կողմից պաշարված էր թշնամու սրերով և կրակներով։ Ժողովուրդը մէջ տեղում այս կողմ և այն կողմ էր փախչում, որ ապստամբութեան կէք գտնէ։ Բայց ամեն տեղ հանդիպում էր կրակներին։ Մի և նոյն ճանապարհով հազար անգամ անցել էր և անցնում էր նա, բայց էլ չէր դուրսում, միայն իր ոտքերի տակ փորձում էր իր նման անբախտներին...

Եւրոպայի ջրեպանը անցաւ մարդկանց դիակներով ծածկված փողոցների մեղմ յատակի վրա-

քնքշէ։ Նրանց կարծիքով պէտք է աւելի խստութեամբ վարվել նուաճած նահանգներին ապստամբ ազգաբնակիչների հետ։ Այդ տեսակէտը պաշտպանում են և պաշտօնական լրագրիները, որոնք յայտնում են կառավարչական անձանց հայեացքները։ Երեւում է, որ աւստրիական կառավարութիւնը մտադիր է պալկաններին շրջապատել զոյլութեան լաւ պայմաններով երկիրը խաղաղացնելու համար։ Եթէ այդպէս է, ուրեմն Աւստրիական տիրապետութիւնը Բալկանեան թերակղզու վրա դեռ ևս շատ փորձանքներ կենթարկվի։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Московский Телеграфъ» լրագրին հաղորդում են, որ Բ. Գուրը մերժեց Կ. Պոլսի եւրոպական մեծ պետութիւնների դեսպանների վերջին առաջարկութիւնը՝ շուտով իրագործել Բերլինի դաշնագրի 61 յօդուածը, որ վերաբերում է Հայաստանի մէջ մոյցնելի վերանորոգութիւններին։ Բ. Գուրը քաջատրուած էր այդ այն դժուարութիւններով, որոնց վերջին օրերը ստեղծեց Եւրոպան Աֆրիկայում և որոնց վրա է դարձրած այժմ Թիւրքիայի ամբողջ ուշադրութիւնը։

—«Presse» լրագիրը հաղորդում է, որ Փրանսիական կիսապաշտօնական լրագրիները եղիպտական գործերի վերաբերութեամբ խոսելով, վերջապէս դիմաւոր հանում են, նրանք վերջապէս խոստովանում են, որ Փրանսիացիք եկող զարնանը վախենում են նոր ապստամբութիւնից Տունիսում և այդ պատճառով անհրաժեշտ են համարում առաջուց նախազգուշական միջոցներ զինել թէ Եգիպտոսում, և թէ Կ. Պոլսում։ «Journal des Debats» լրագիրը համարձակ մեղադրում է սուլթանին այն բանում, որ նա, կրօնական խորհրդածութիւնների դիմախի տակ, ոչ թէ միայն խաղաղութիւններ է անում հիւսիսային Աֆրիկայում Ֆրանսիայի դէմ, այլ ուղղակի գրգռում է նրա իշխանութեան դէմ արաբական ցեղերին, բայց դրանց փարիզի լրագրի հաւատարմութեամբ է, որ սուլթանը հենց այդ բանի համար Կ. Պոլսի կանչեց Տունիսի ապստամբութեան նախկին առաջնորդին, Ալիբէն Կալիֆին, որ միշտ ձեռքի տակ ունենայ մի պղծանքաւ Տունիսի բէյի դահի վրա։

—«Temps» լրագիրը Թիւրքիայի մասին հետեւաւ կերպով է խօսում։ «Օսմանցիների տիրապետութիւնը կործանիչ աղբյուրիւն ունեցաւ ազգաբնակչության մասնանկի վրա, այդ պատճառով նրան թէ կողմ կտար արդէն և թէ յետ միջոցին։ Շատ անգամ հրաւիրվելով նոր ճանապարհով ընթացի և դուրս եկաւ մի փողբիլ հրապարակի վրա։ Նա ճանաչեց, որ դա մեծ մղկիթի առջին փողբիլ հրապարակն էր։ Մղկիթի դուռն հանդէպ զրգած էր մի նիւթով, որի ծալքին երևում էր մի մարդկային դուռ։ Նրա մօտ վառվում էին մի քանի ջահեր և ամեն կողմից տեսնելի էին կացուցանում կառավոր։

—Այդ ինչ զուլէն է, հարցրեց խանը մէկից։

—Մօլանիի գլխաւորի դուռն է, պատասխանեց նա։—Խնամ ամեն տեղ պտուղ են խաւին, որ նրա դուռին էլ կըրնի և ցցեն դրա մօտ։ Այս եթէ ինձ յաջողվի գտնել նրան, ի՞նչ մեծ ընծայ կը ստանայի...

—Իտ ինչ աղբից ես, հարցրեց խանը սառնասրտութեամբ։

—Ես Բայիկուր իշխանի զինուորներիցն եմ։ Նա խոստացել է հարկւր ոսկի տալ, ով կը տանէ նրան խանի դուռը, իսկ երկու հարկւր ոսկի երբ կենդանի կը ներկայացնէ նրան։

Խանը լուռութեամբ հեռացաւ իր վտանգաւոր խօսակցից։ Նա ընտրեց բերդի մի խու, յետընկած կողմը։ Նուազին անարկութիւնները վրա կառուցած քաղաքը, բոլորովին գործի էր տալիս լաւ տարածութիւններից, մանաւանդ այն կողմը, որ այժմ ընտրեց նա։ Վաղում էր նա ամենայն արարութեամբ, ստանց յետ ու առաջ, առանց ալ ու ձախ նալելու։ Խորտուրտ, դարուփոս, անհաւատարմ անցքերի մէջ երբեմն սպիտակվում էր, երբեմն տղը, դուռը քարերին էր զարկում, երբեմն ցած էր զրոյրում և երկու միտ էր անշարժ, մինչև կրկին ուշի էր գալիս, յետոյ զողորդալով բարձրանում էր, և կրկին շարունակում էր իր փախուստը։ Նա յոյժած էր, սաս-

թմաւ, թիւրքաց կայսերութիւնը պարզ ապացուցեց, որ նա վերածնութեան անդրուան է, այդ բանը վճռեց նա վիճակը։ Բերլինի կոնգրեսը պարզ ցոյց տուց Թիւրքիային, թէ նա ինչ կարող է սպասել եւրոպական պետութիւններից։ Ինչու համար ինչոյն նրանից Բօսֆօրի այս կողմը գտնված իր կառավարչի երրորդ մասը, որովհետեւ նա չը կարողացաւ կառավարել դրանց։ Ինչու համար կորեցին նրանից մէկ մեծ նահանգ և տուցին Յունաստանին։ Որովհետեւ Յունաստանին աւելի ընդունակ են համարում բարդաւորացնել իր հպատակներին, քան թէ Բ. Գրանը։ Եւ այդ բանը կը շարունակվի մինչև այն ժամանակ, քանի որ Թիւրքաց կառավարութիւնը կը հեռանայ ժամանակակից քաղաքականութեան պահանջներից։ Նրանից պահանջում են վերանորոգութիւններ և շալաստանի համար—նա նրանց չէ տալիս։ Թիւրքիան այդ նահանգն էլ կը կորցնի։ Թող սուլթանը հասկանայ, որ նրա դրութիւնը եւրոպական պետութիւնների մէջ մի մաղից է կախված։ Եւ թող չերեակցէ, թէ Եւրոպան, որպէս վարձատրութիւն, կը տայ նրան հիւսիսային Աֆրիկայի տիրէ։ Այդ ծովափը պատկանում է նրան, իսկ այն հողը կտորը, որին տիրել է եւրոպական քաղաքակրթութիւնը, այլ ևս նորից չէ կարելի բռնակալութեան և բարբարոսութեան դոճ դարձնել։

—«Agrar Zeitung» լրագրին Բէլգրադից գրում են, յունիսի 9-ից, որ սերբիական կառավարութիւնը հրամայեց շէնոօրցի սերպար Մատանովիչին դուրս գալ Աֆրիկայից, աւելացնելով, որ նա չէ կարող ապստամբանալ տալ այնպիսի մարդկանց, որոնց պարագայումն էր զրգուել խուճկութիւնները և անհանգստութիւնները հարեան պետութեան մէջ։ Մատանովիչ արդէն 7,000 մարդիկ ունի, որոնք եկող զարնանը պատրաստ կը լինեն ապստամբութեան համար։ Հերցեգովինայում և Կրիւշիայում։ Նրա խօսքերի համեմատ, նրանց մէջ շատ շէնոօրցիներ կան, որոնց գոգար չի լինի շէնոօրցիայի թույլ կողմի միջով անցնել։ Բէլգրադի ամբողջ մասում, դրա մէջ և կառավարչական օրգանը համակրութեամբ են խօսում կրիւշիաների մասին և մատնացոյց են անում, որ անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել նրանց իրաւունքների վրա։ Ընդդիմադրական մտաւոր պահանջում է պայմանական միջոցներ Բալկանեան պետութիւնների հետ։

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆՅՈՒՆ

Ա. ՊԵՏԵՐՍԲՈՐԳ, 20 յունիսի։ Լրագրիները յունիսի 20-ից հաղորդում են, «Московский Телеграфъ» լրագրին տուած է երկրորդ նախազգուշութիւն։ Մարտանքների համար ընդհանուր ընկերութիւն է պատրաստվում։ Խարկովի, Կիւիլի և Պալատայի նահանգներում ձմեռային ցանքերը չեն բուսնում։ Լուր կայ, որ Կաշարովի տեղ նշանակվում է ճերներ։

ՓԱՐԻՋ, 20 յունիսի։ «L'Union Générale»-ի զանաւարնում 500,000 Ֆրանկի անպէտք թղթեր զանվեցան։ Պակասորդը 96 միլիոն է։ Այդ լուրը Լիւնի մէջ անկարգութիւններ պատճառեց։ Զօրքեր հարկաւորվեցան։

Խախտիկ—հրատարակող ԳԻՐԻՈՐ ԱՐԺՈՐՆԵՐ

տիկ յոյժած։ Նա, որ իր կեանքում հարկւր քալ ոտքով ման չէր եկել, այս փչեք մի քանի անգամ անցել էր ամբողջ քաղաքը, զանազան ուղիներով։ Երբեք անցնելու զօրքերը չէր տեսնում։ Նա յոյժած էր, բայց յոյժածութիւն չէր դուռն։ Երկուց, հոգեկան վրդովմունք, անաջողութիւնների կատաղութիւնը այն աստիճան զրգուել էին նրա ջերմ, որ խելագարի նման գտնվում էր մի տեսակ տնայային դրութեան մէջ։ Այդ հիւսնաւոր գրութիւնը մարդիկներին երբեմն աւելի ուժ և զօրութիւն է տալիս, քան թէ ունենալ նրանք, երբ առողջ էին։ Այդ էր պատճառը, որ նա լուսնահարի նման, ոչնչի տեղ էր դնում, անցնում էր հանդիպած խոջորդները, ստանց ցաւ դրաւ, թէ նրա մարմինը ջարդ ու վնաս էր լինում։ Բայց երբ ընկաւ մի փոթի մէջ, երկուրդ դուրս գալ չը կարողացաւ։

Հակառակորդը, կարծես, վճռել էր մինչև վերջին ծայրը ստորացնել նրան, քանի տալ նրան դժբախտութեան միտքը մինչև վերջին կաթիլը, և զգալ տալ նրան իր ոչնչութիւնը... Փոսի մէջ մի քանի օր առաջ ջուր էր կանգնած, ջուրը ցամաքել էր և իր տեղը թողել էր թմանց ցեխ։ Նա խրվեցաւ այդ ցեխի մէջ։ Երկար թնամում էր նա իր փախուկ անկողնի մէջ, առանց հասկանալու թէ որտեղ է գտնվում։ Վերջը ուշի եկաւ, և խաղաղութիւնը մի կերպով դուրս եկաւ փոսից, մոռանալով, որ գլխարկը թողեց այնտեղ։ Գլխաքաղ շարունակեց իր ճանապարհը։ Այժմ նրա մտքի և յիշողութեան խառարի մէջ ազօտ լուսով փայլում էր մի կէտ միայն—իր հարեան...

(Ը շարունակվի)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԻՆՁԵՒ ԶԱՏԻԿ զվարկներ 1 ր., ֆուֆայկաներ 2 ր. 75 կ., բրիկներ 4 ր., բիշակներ 8 ր. ամբողջ հագուստ 13—19 ր., դրապ, մահուդ, արիկո, սրբիչներ և պլոմներ կես զնով: Հնդկական բրինձ 6 կ., սագո և պերլովայա կրուպա 9 կ., պանիր չեստեր 70 կ., նշտայ Կոլմանի 18 կ. ֆուշար, լուծողական ձեթի պիլիկներ 2 կ., լուացքի փուշի 5 կ.: **ՆՈՐՈՒԹԻՒՆ:** Մեղրամամ և արծաթէ մամեր 35 և 42 կ. ֆուշար: Մեծ քանակությամբ անգլիական և ֆրանսիական մահճալիներ 30% էժան քան թէ ուրիշ տեղ, այսինքն երկրաների համար 4 ր., մեծերի համար 12 րուբլայ: **ԻՍԿԱԿԱՆ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ:** 4—36

«ԿՐԿՆԱԿԻ ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՇՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ» ԲՈՒԻԳԱԼՏԵՐԻԱՅ

Ամենանոր և գործնական ձևի, բացարձակ կանոններով և բացարձակությամբ, որ ամենահեշտ կերպով կարող է սովորացնել հաշվապահությանը այն անձանց, որոնք ցանկանում են սովորել կամ ունենալ այդպիսի հաշվաներ, շուտով կը մանր մամուլի տակ գիրքը կը բաղկանայ մոտ 400 երեսից. և մաքուր տպագրությամբ, գործ հետ միասին կը լինի և մի փոքրիկ վիպասանությամբ «Գող» վերնագրով և «Խմբերը» յառեղ ուսմամբ, ցանկացողները թեֆլետով կարող են գրուել «Կրկնորոնական» և «Չափարկայ Գրիգորեանցի» գրադաճառանոցներում և թագէտ Տէր-Միքայէլեանցի մօտ. Բագու Բասիլիյ մագալիսում, ինձ մօտ և «Մարդ ընկ» գրադարանում: Գաւառական քաղաքներում այն անձանց մօտ, որոնք բարեհաճել են այդ մասին ստորագրութեան թերթ ընդունել:

Երկուսի արժէքն է միասին 2 ր. 50 կ. տպագրութիւնից յետոյ 3 ր.: Բաժանորդները ինքնուրուք և ազգանունները կը տպագրուեն գրքի վերջում:

Հրատարակիչ Աբէլ Գ. Ապրեսեանց

ԾԱՆՎՈՒՄ ԵՆ 25% ԷԺԱՆ քան թէ ուրիշ տեղ. ԹէՑ, կակաօ, ՇՈՎՈԼԱԿ, բիսկվիտներ, մուրաբաներ, բրինձ, ամաններ, բաժակներ, բոկալներ, թէյամաններ, սուգօկներ, ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, կրկն լուսնալու ամաններ, ԿՈՂՊԵՔՆԵՐ, ԶԳԵՍԱԿԱՆՆԵՐ, գդալներ, դանակներ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, ծրարներ, տետրակներ, մատիաներ, չիւր-ՑԱՆՆԵՐ, ԲԵՎՈԼՎԵՐՆԵՐ, մեջքակապներ, կլէնկա, ԹԱՄԲԵՐ, սանձեր, ուղեօներ, ՄԱՀՃԱԿԱՆՆԵՐ, երեսորդներ, թաշկիւններ, կանանց գուլարներ, մարգերանց գուլարներ, տուալետի սապոն, հոտաւէտ ջրեր, շերբետ, ցիտրան մագնիզիա, խինայի գինի, պօրտվէյն, խերես, կօնիակ և 1,000 այլ առարկաներ: **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄԷՋ:** ՆՈՅՆ ՏԵՂԸ փաճառականներին **ՄԵԾ** քանակությամբ ծախվում է **ԹԷՑ**. պուգերով 40, 46, 52, 58, ր., իսկ ֆուշարով 1 ր. 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ., իսկ ամենաբարձր թէյը ֆուշար 2 ր. քաշը ԱՌԱՆՑ ԹՂԹԻ:

ՀՐԱՑԱՆՆԵՐ 20—60 ր. և 204-ԲՈՐ (chokl bore) George Dau-ի գործարանից 120 ր., բէվոլվերներ 4—34 ր., ԲՈՒԼԴՈԳ (bull dog) 11—20 ր., կանանց թամբեր 65 ր., շեֆիդի դանակներ 3 ր. 50 կ. գրիֆներ, պլոմներ կիսապնով, ֆիլտրներ և այլն: Ամենամեծ պահեստ հրացանների և բէվոլվերների թիֆլիսում:

85—100

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

«ԲԱՐԵԿԱՄ ՄԱՆԿԱՆՑ»

Այս ֆիրմայով բանալով երևանում են գրափաճառանոց՝ կցելով նորա հետ ուսումնական, դիւանական, նկարչական և կազմարարական իրեղէնների խանութ, յանձն եւ առնում տալ միշտ յիշեալ ապրանքներից եւանի և նորա շրջակայ քաղաքների և գիւղերի դիւանաներին և ուսումնարաններին շատ ձեռնառու գներով և պայմաններով:

Ընդունում եմ տպագրել տալու բանկներ, ծանուցագրեր, յայտարարութիւններ, այցետուներ, բրօշուրներ, նաև գրքեր, ամենաարժան փարձով:

Ինձ մօտ է գտնուում իմ հրատարակած «Տնային բժշկական մարմնամարդութեան» գրքոյի պահեստը:

Իմ հասցեն. Գ. Զրիւն, Н. Симеонянцу, магазинъ. «Другъ-Дѣтей».

ԱՐԴԷՆ ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Ռուսաց յայտնի գրող **ՎՈՒՉԵՏԻՉԻ «ДВѢ ЕЛКИ»** մանկական գրքուկի հայերէն թարգմանութիւնը «ԵՐԿՈՒ ՏՕՆԱԾԱՌ» անունով:

Այս գրքոյի ընդունել էր տպագրելու Հայ երէն գրքերի հրատարակչու թեան ընկերութիւնը. բայց իրանից անկախ պատճառներով ինքն ընկերութիւնը յաճողութիւն չունեցաւ տպագրելու: Տպագրված է շատ ընտիր լի լի վերայ ի ոչ ոք տարբերով:

Գինն է 20 ԿՈՊԵԿ:

Կարելի է ստանալ թէ՛ կենտրոնական գրափաճառանոցից և թէ՛ թարգմանողից՝ հեռեկան հասցեով:

Тифлисъ—на Авлабартъ Ивану Петровичу Назарянцъ.

Վաճառվում են 15,000 ամաններ առաջին տեսակի 15 կ. հատը, 12,000 խրուստալի բաժակներ 25 կ. հատը, 10,000 բոկալ և բաժակներ 10 կ. հատը, 10,000 մատուցարաններ և կողպէքներ 15 կ. հատը, 10,000 աւելի 8—40 կ. հարկերը, 10,000 պինդներ 5 կ., 5,000 շիշ պօրտվէյն և խերես 1 ր. հատը, 2,000 արշին կլէնկա 60 կ.—2 ր. արշինը, 2,000 գրիֆներ մատի տներ և գրչակոթներ 8 կ. գրիֆներ, 2,000 ֆ. հնդկական բրինձ 7, 8 և 10 կ. ֆուշար, 1000 ֆուշար լէպէօշկա 50 կ. ֆուշար, 600 անգլիական բէվօլվերներ 4—34 ր. հատը, 300 անգլիական հրացաններ 20—100 ր. հատը, դրապ, արիկօ, ալբոմներ, ձմեռայն պալտներ, գլխարկներ, փարսիկներ, հագուստ կէս գնով: Ծախվում է **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄԷՋ:** Նոյն տեղը ծախվում է ծովային **ԽՈՏ** պուգը 2 ր. 50 կ.: 41—60

Վերականգնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերագործող: Զնոյ՝ Գինը 2 ր. շիշը, **ՓՈՍՏԱՆՑՈՎ** ուղարկված 2 ր. 49 կօպ. **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ:



Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ** իւր, մազերը ամրացնող համար, 1 ր. ամանը և վրձին զլուսյաւի գէժ, **ՏՈՒԼԷՏԻ ՍԱՊՈՆ** և հոտաւէտ ջրեր և այլն: 70—100

Կովկասեան դպրոցաց հոգաբարձուներէն շատերը՝ մեր հրատարակութիւններն և դասագրքերը ձեռք բերելու համար միշտ մեզի Ռոստով (Կօնի վերայ) քաղաքը զիմեզ և ճանապարհի համար աւելի ծախք վճարելով, նոցա դիւրութեան համար հարկաւոր համարեցինք յայտնել, որ այն գրքերը կարող են ստանալ նաև մեր եղբորից, որոյ հասցեն է. Тифлисъ, Григорію Абрамовичу Теръ-Абрамянъ, Ольгинская улица, д. № 3.

Իսկ նորա մօտ քանուած գրքերը սոքա են.	ր.	կ.
ԱՅԲԲԵՆԱՐԱՆ ՆՈՐ, 75 վիմատիպ պատկերներով	—	15
ԲԱՆԱԼԻ ԳԻՏՈՒԹԵԱՆ ուսու լեզուի	—	50
ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ հայերէն, ուսուներէն և ֆրանսերէն	—	50
ԸՆԹԵՐՑԱՐԱՆ բարոյական ուսմանց, ազգային գիտելեաց և զուարճանքի պատմութեանց	1	—
ԸՆՏԻՐ ԱՌԱԿՆԵՐ եղովայնի և փոխովի հանդերձ բարոյական խորհրդածութեամբը, 20 վիմատիպ պատկերներով	—	60
ԺԱՍ, կատակերգութիւն 3 արարվածով	—	30
ԹԵԳԱՐԱՆ, որ է «Կանոն սաղմոս»	—	5
ՅՈՎԱԼՓ Գ. կենսագրութիւն հանդերձ պատկերաւ	—	25
ՆԵՐՍԷՍ Ե. կենսագրութիւն հանդերձ պատկերաւ	—	25
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԽՐԻՍՏՈՒ (սակաւագիւտ)	1	—
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ, երրորդ տիպ. 24 վիմատիպ պատկերներով	1	—

Բազմաթիւ օրինակներ գնողներուն նոյն զինքում կը լինի, ինչ որ սպուած է մեր 1882 թուականի օրացույցին մէջ:

Տէր տպարանի և վիմագրատան Յովհ. Տէր Աբրահամեան (հ. շ.) 6—8

ՎԻՆԵՆԱՅԻ ՄԵԲԷԼ (աթուներ և բազմաթուներ) ծախվում են մեծ քանակությամբ և մանր, միջին փողոցում Կատօլիկաց փողոցի անկիւնում ՄԻՔԱՅԷԼ ՏԵՐ-ՆԻԿՈԼԱՍԵԱՆԻ պահեստում:

Օտարաքաղաքացիք կարող են զիմել այս հասցեով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.

130—150

Մամուլի տակ է և շուտով լցւա կը տեսնի «ՀԱՅ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱԿՆԵՐԻՆԵՐԻ» առաջին հատորը (ա. գրքոյի), որ բովանդակում է իւր մէջ միայն հէքիաթներ, ժողոված երևանեան նահանգում և գրած բուն տեղական բարբառով:

Այս ա. գրքոյի անմիջապէս լցւա տեսնելուց յետոյ, մամուլի տակ կը մանր նորա ր. գրքոյը: Իսկ երբ կը վերջացնենք մեր ունեցած հէքիաթների տպագրութիւնը, այնուհետև հետև ձեռնամուկ կը լինենք ժողովրդական աւանդութեանց միատեսակների հրատարակութեան—ՀԱՆՔԱՆՈՒՆԵՐԻ, ԱՌԱՅՆԵՐԻ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ, ԱՆԵԾԲԵՐԵՐԻ, ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ և այլն (որոնցից մեծ քանակությամբ ունենք ժողոված) լցւա ածելով նոյնպէս առանձին գրքոյներով:

Յուսով եմ, որ մեր պատուելի օտարաքաղաքացի համագրայնը չեն զլանայ իւրեանց կարեաց չափ աշակից լինելու ինձ այս ձեռնարկութեան մէջ:

Բաւականաչափ նիւթ ուղարկողները, որպէս այս հրատարակութեան աշխատակիցներ՝ այսուհետև տպագրութիւնը բոլոր գրքոյներից մի մի օրինակ ձրի կը ստանան. բայց այս նոցա ազգ-անունները կը տպագրուեն գրքոյի վերջը: Իսկ այն պարոնները, որոնք այս աւանդութիւններից նոյնպէս մեծ քանակությամբ ժողոված ունեն և կը ցանկանան իրանց ժողովածուն փաճառել թո՛ղ բարեհաճեն յայտնել իրանց պայմանները:

Նիւթերը հարկաւոր է գրել (գրածը խնդրում ենք մաքուր լինի և որոշ) բուն տեղական բարբառով. զնելով ժողովածուի վերջը տեղական դժուարիման բառերի բացատրութիւնները:

Իմ հասցեն՝ Вагаршапатъ. Тиграну Назарянцъ. Տ. Նաւասարդեանց.

ՎԵՐԱԿՈՒՆԵՐ 4 ր., ծըծողներ 1 ր., ծալով աթուներ 1 ր. 50 կ., ՓԱՅՏ-ԱՌՈՒ 4 ր., ԲԱԶԱՌՈՒՄ-ՄԱՀԱԿԱԼ 10 րուր և աւելի, թէյի բաժակներ 25 և 30 կ., մի աման քորոցներ 50 կ., պաստեւա ծխողների համար 60 կ. ֆուշար, անգլիական ՎԱՆԵԱՆՆԵՐ և այլն ծախվում են ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒ ՄԷՋ: 10,000 զոյգ գուլարներ 25 կ.—ից զոյգը, 10,000 զոյգ կանանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 30 կ.— 1 ր., 7,000 մատուցարաններ 5 կ.—5 ր., 1,000 ՄԱՀԱԿԱԼՆԵՐ 5 ր.—35 ր., 400 արշին բամբակ. 1 ր.—1 ր. 30 կ., պաւլուսինա 40 կ.—1 ր., 300 հատ բէվօլվեր 4 ր.—35 ր., 700 ալբոմ ԿՍՍԱԳՆՈՎ, 10,000 ֆուշար թէյ թէՑԱՄԱՆՈՎ 1 ր. 65 կ.: Երկրորդ գրիչներ իւրաքանչիւր ձեռքի համար: Ծախվում են ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒ ՄԷՋ: 74—100
--

Գուրա եկաւ մամուլի տակից Սեդրակ Մանգրիւնեանի հեռեկան աշխատութիւնը. «ԿԵԱՆԲԻ ՀԱՆԳԱՄԱՆԲԵՐԻ ՀԱՄԵՄԱՏ ԹՈՒՄԱՐՆՈՒԹԻՒՆ» Միասնական դպրոցների Զորքորդ տարուայ դասընթացը և միանգամայն Ա. Բ. և Գ. տարիների համար հրահանգ: Վաճառվում է բացառապէս «Կենտրոնական գրախանութում» Գինն է 75 կօպէկ:

ԲՈՇԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳՈԿՏՈՐ ՏԵՐ-ՋԱՆԵԱՆՑ ընդունում է հիւանդներին ամեն օր առաւելու 10—12 ժամը: Սօրթակ, Սաղօլայա փողոց տուն Տուտուխովի:

5—5

Մի ուսու օրիորդ, որ ուսումնաւ աւարտել է տուած գիմնազիոնում և ունի զիւլում՝ ցանկաւ որոնք և բոս անհեւ Նաւասարդեանց: 5—5